



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ԷՇՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒՐԲԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Էշմիածնի Մայր Աթոռի տպարանը, որը հաստատվել է 1771 թվականին Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ջանքերով, իր գոյության 200 տարիների ընթացքում գիտության, գրականության և արվեստի բնագավառներին վերաբերող իր բազմազան հրատարակությունների շարքում տեղ է տվել նաև սուրբգրական հրատարակությունների: Սակայն վերջիններին անհրաժեշտության հարցով Մայր Աթոռի Գանձականությի կողմից ուղարկության էր արժանացել ավելի վաղ, քան սեփական տպարանի հաստատումը: Ծիշու է, թե Աստվածաշնչի գրեթից Սաղմուարանը վաղոյ էր սկսել հրատարակվել Բայկական գաղործներում հաստատված տպարաններում, —առաջին տպագրությունը՝ 1566 թվականին էր եղել Վենետիկում՝ Արգար Թոխաթեցու ձեռքով, —քայլ Աստվածաշնչի մյուս գրքերի և լիակատար Աստվածաշնչի որևէ հրատարակություն չէր եղել մինչև 1860-ական թվականները, երբ այդ գործը սկսել էր մտահոգության առարկա դառնալ Էշմիածնում:

Մինչև այդ, մտավորապես 1850 թվականին, Աստվածաշնչի լիակատար հրատարակություն տպվում մի փոք կատարվել էր Նոր Չույայի և Ամենափրկիչ վանքի տպարանում՝ Հովհաննես Չույային ձեռքով, քայլ մնացել էր անկատար, ինչպես գրում է պատմագիր Խաչատուր Չույայեցին՝ այդ տպարանի գործունեության մասին խոսելիս.

«Ուր և ընդ բազում գրեանց՝ որք տպեցին, պեսան ընդ որոց և տպել զԱստվածաշնչն զիրն. այլ վասն մեղաց մերոց մնաց թերա-

կատար, որպես կայ մինչև ցայսօր ի միջի մերում»¹:

Աստվածաշնչի լիակատար հրատարակություն կատարելու պատիվը վերապահված էր Էշմիածնի Մայր Աթոռին:

Էշմիածնի միարամության անդամ Ուկան վարդապետ Երևանցին Հակոբ Չույային կաթողիկոսի հանձնարարությամբ 1666 թվականին տպագրում է հայերեն Աստվածաշնչը՝ ամբողջական կազմով, Հովհաննիայի Ամստեղուամ քաղաքում «ներ տպարանում սրբոյն Էշմիածնի և սրբոյն Սարգսի Զօրավարի»: Հրատարակությունը կրում էր «Աստվածաշնչն Հեռոց և Նորոց Կոտակարանաց ներ պարունակող, շարակարգութեամբ ճախեացն մերց և ճշմարտափրաց թարգմանչաց»: Հատորի վերջում, ընթերցողին ուղղած խորություն, Ուկան, բայց սպասար, յերկրէն Սորարադու ի գիւղարադարէն Երևանայ, հրամանա հաւում Հայոց և կաթողիկոսին տեառն Յակոբու եկեալ յԱմստեղուամ, ձեռն արկի մատենոյ աստուածայնոյ» (2-րդ մասի էջ 830—31): Նվ դարձալ, տպագրության հիշատակարանում, նորից եր սպամ. «...իշխանութեամբ և հրամանա վեհափառի կաթողիկոսի և պատրիարքի Հայկազնեան սենի, մեր պատրիարքարանում սրբոյ Էշմիածնի, լուսանկարի և քրի-

¹ «Խաչատուր արեւադի Չույայիցոյ Պատմութիւն Պարսից», Վաղարշապատ, 1905, էջ 121:

տուսաթիմնեցելոյ, տեսան Յակոբ, մեր բուշ փրկչին հազարորդի² վեց հարիւրորդի վաթսներորդի երկրորդի, իսկ ըստ Հայոց թույ՝ հազարերորդի հարիւրորդի մասաւասներորդի, մեստնեմքերի ԴՆ, եկեալ լերկրէ և բազք իման դիմեցի ի կողման երդուիդոյ, բայզաւ տպման մատունիս այսորիկ աստուածոյ» (2-րդ մասի Էջ 833):

Այս մեծանից հրատարակությունը (շարկաձք՝ 22.2×17.8 մ) բաղկացած էր Հ+ 628+834 էջերից, և պատկերազարդ էր: Բովանդակում էր Հին և Նոր Կոստանդնուպոլիսի ըստ հայկական կամունի: Ուկանի ծեռներներոյթան պերճախոս միայնականն է հանդիպանում այս հրատարակությունը և միաժամանակ Էջմիածնի գահակալների հոգատարքանում ապացույցը՝ հայկական Աստվածաշնչի տպագրման գործի հանդեպ:

Ամսութամայն այս հրատարակությունն իր ժամանակի համար ակնառու երևույթ էր թե՝ որպես նայ տպագրական արվեստի հնույց և թե՝ որպես հայերեն Աստվածաշնչի ամբողջական օրինակ, որի բացակայությունը զգայի էր եղել մինչև այդ՝ ոստմանական հասարակության մեջ. իսկ այս վերջին հանգամանքով էլ նա արժանառու է մի բանի նոր տպագրությունների: Ուկան Երևանցու ազգականներից Պետրոս Լատինացին, որը տպարան ուներ Կ. Պոլսում, 1705 թվականին այնտեղ նորից է տպագրում Աստվածաշնչը՝ «ի յօրինակ հնոյ տպեցեալ լուսաւորեալ նոգի Ուկան վարդապետի՝ յար և նաման, ո՞չ աւելի և ո՞չ նուազ, սակայն մանր զրով»: Մշիթար Սեբաստացին 1783 թվականին Վենետիկում նույնական վերաբարարակում է Ուկանյան Աստվածաշնչը՝ որոշ փոփոխություններով ու սրբագրություններով. իսկ Մշիթարի այդ հրատարակությունն արտասպանում է Պետերբուրգում 1817 թվականին, և Սիրամիուրում նույն 1817 թվականին:

Հետարքրրական է, որ 1770-ական թվականներին Մայր Աթոռում հաստաված տպարանի տպագրական առաջին փորձերի համար Սաղմոսարանն է ընտրվում: Այդ տեղեկությունը մենք գտնում ենք 1774 թ. Սիմեոն Երևանցու հրատարակած «Տօնացոյց»-ի վերջարանում, որ հեղինակը, խուելով տպարանի առաջին արտադրությունների մասին, գրում է. «Յորում տպեցար նախապէս զքանի հաստ սաղմոսս, որ գտրիասթիմն շատ ուներ տպեցմանն: Երկրորդապէս՝ տպեցար զփոքիի գիրքն Աղօթից, և ևս փորձելոյ աղազաւ զպարագայս գործոյ. որ թէպէս հաստ էր բան զՍաղմոսն, սակայն՝ և ևս ունէր զտիասթիմն ուսան»:

² Տպիած Է՝ վեց հազարորդի:

որիքան առ գործս այս: Ապա երրորդապէս տպեցար զՏօնացոյց զար՝ որ Աստուծով բան զեռա հաստ է և կատարեալ» (Էջ 554):

Այստեղից պարզ երևում է, որ տպարանը, որպես սկզբնական փորձեր, Սաղմոսարանց մի քանի սաղմուներ տպագրելոց մեռն՝ դադարեցուել է շարունակությունը, մկանի ունենալով որ տպագրական գործը դեռ հաստացած չէ («Տիաստություններ շատ ունի»). իսկ թերություններն ուսումնասիրելուց մետք նոր փորձ կատարելու համար 1772 թ. տպագրում է Սիմեոն Երևանցու «Գիրք այդօթից որ կոչի Զքոսարան հոգևոր» փոքրիկ երլը:

Էջմիածնի տպարանն իր գործոյան հետագա ընթացքում Սաղմոսարանը տպագրել է բազմից թե՝ առանձին հրատարակությամբ, թե՝ Ատենի Ժամագրքի կազմում:

Առանձին հրատարակությամբ՝ Սաղմոսարանը տպագրվել է չորս անգամ:

1. Սաղմոն Դավիթի, որ կոչի Սաղմոսարան: Տպագրեցեալ ի մեծի աթոռոց սրբոյ Էջմիածնի, հրատանաւ տեսան Ղոկասու սրբազն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, ի բուշ մերում ՌՄՌՁ, ի տպարանի Սուրբ Լուսատորչին:

Բաղկացած է 418 էջերից, 12.9×7.6 մ շարվածքով: Վերջում ունի տպագրության հիշատակարան, որ Է՝

«Ծնորիթի... տպագրեցեալ աւարտեցաւ սուրբ գիրքը Սաղմոսաց ի ՌՄՌՁ թույշ մերում, և յամսեանն սկստնեմքերի, ի լուսակառույց և ի բարձրագան աթոռու սուրբ Էջմիածնին: ...Արդ՝ որք ընթեռնուք և վայելէք զա, յիշեաչիք ի յարժանահայց աղօթս ձեր զիաստառողն տպարանիս զտէր Սիմեոն սրբազն և յոգևաշխատ կաթողիկուն՝ զիանգուցեալն ի Քրիստոս: Ըստ նմին յիշեաչիք և զյաջորդ գարակալն նորին զաստուածարեալ հայրապետն Ամենայն Հայոց զտէր Ղոկասու սրբազն և բարեշան կաթողիկուն, որոյ հրատանաւ և հոգարարձութեամբ տպագրեցաւ սուրբ գիրքս: Արժանի համարնեսիք լիշման և զիոնքնեմին որդեսակն սրբազն վեհապետին՝ զթաղէոս վարդապետն, զըրբագրիչն փորձից սորին: ...Նաև յիշեաչիք զվարապետ Յարութիւնն Վաղարշապատից, և զաշակերտ նորին զտիրացու Խաչատորն, և զգուշայր Մաղաքիայն, և զտիրա-

³ «Հաջի չնօք» անում դպրոցական մանուկների համար որպես հեղարան լուս սնծաված հնուկան մասնակի հրատարակությունը.

Առաջին կանոն Սաղմոսի, բաժանեալ ի հեղենայն ի պետ դեռավարմթից: 1865—ՌՅՃԴ՝ ամ. Տպագրեալ ի Ս. Էջմիածնի: Տպակացած է 48 էջերից, 14×8.2 մ շարվածքով:

ցու Սովորանդրու, և զտպիչ Գեղրգմ և Ա-
ղերսանդրու, և որք լիշերդ և այլն:

2. Սաղմու Դաթի, որ և կոչի Սաղմոսա-
րան: Տպագրեալ ի մեծի աթոռոց սրբոյ Էջ-
միածի, հրամանաւ տեառն Եփրեմի սրբա-
զան Կաթողիկոսի Ամենայն Հայոց, ի թուշ
մերում ՌՄԿԸ, ի տպարանի Սուրբ Լուսա-
ւորչին:

Բաղկացած է 417 էջերից, 12.5×9.1 սմ
շարվածքով: Վերջում ունի տպագրության
նիշատակարան, որ է:

«Ծնորնի... տպագրեալ առարտեցաւ սուրբ
գիրք Սաղմոսաց ի ՌՄԿԸ թուականութեան
մերում և խմելան մայսի, ի լուսակառուց
և ի բարձրագան մայր աթոռու ամենայն Հա-
յոց ի սուրբ Խաթողիկելն Էջմիածին:... Արդ՝
որք անհինան լինիք սուսա առաջի Աստո-
ծոյ՝ մի՛ ճանձրապահի լիշել ի խնձանուէք
մայթան ձեր զնախլին հաստատողն տպա-
րանին ի Քրիստո համեզուցեալ աւել Սիմեոնի
սրբազն և լոգեաշխատ կաթողիկոսն, և
զյաջորդ զանակա նորին զտէր Պուկաս լո-
ւանովի հայրապետն: Եւ մանաւան զվերա-
նորդողն տպարանին զտէր Եփրեմ լոգեա-
վիչու սրբազն վեհապետն, որ ի մեղու-
թեան ժամանակի գերազոյն քանի զտա-
շինն պայծառացուց և գրեթէ ի հիմանէ նո-
րոգեաց զտպարանն սրբոյ զանի, ի լոյն
մանական նորոյ Սիմեոնի, զխանգարեալն ի
բազում ամաց հետէ:... Արժանի համարես-
չիք լիշման այլ և զրբազն վեհապետի
հարազատ պաշտօնեայ իսկ և նոգեւոր որդ-
եակ՝ զրբագրիչ Գրիգոր Վարդապետն Աշ-
տարակցի Վարդապարեանց: Նաև զկու-
տանդապոլուեցի Յովհաննիսին պատու-
իլ վարդապետ Մարտիրոսն, որ ևս ոչ սա-
կա աշխատան կրեաց յաղագս պէսպէս
հաներձանաց վերանորոգեալ տպարանին,
և զաշակերտուն նորին զգրաշար Գրիգորն,
զԳաղուտն և զԳերզն, զմելանահար մահ-
տեսի Պենրուն Վանեցի, և զտպիչ տիրա-
ցու Յակոբն» և այլն:

3. Սաղմու Դաթի: Տպագրեալ հրամա-
նաւ աստուածքնիք և վեհափառ Կաթողի-
կոսի Ամենայն Հայոց տեառն Ներսիսի ե.
և ասպետի: 1846—ՌՄՂԵ: Ս. Էջմիածին:

Բաղկացած է 410 էջերից, 11.9×7.8 սմ
շարվածքով:

4. Գիրք Սաղմոսաց Դաթի: Հրամանաւ
տեառն Գերզեալ Դ. վեհափառ և սրբա-
զագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց:
ՌՅԵ—1871, ի տպարանի սրբոյ կաթողիկէ:
Էջմիածին, ի Վաղարշապատ:

Բաղկացած է 313 էջերից, 14.8×9 սմ շար-
վածքով:

Այս առանձին հրատարակություններից
քայի: Սաղմոսարանը երեք ամօամ լոյս է
տեսել նաև Ստենի Ժամագրի կազմում:

Ժամագիրը ատեմի, յորում պարունակին
երեք գիրք սրբոյ Եկեղեցւոյ մերոյ Ժամա-
կարգութեանցն: ...Վերստին տպեցեալ ի
յաստուածակերտ և ի լուսակառուց աթոռու
սուրբ Էջմիածինին: ...Ի տպարանի Սրբոյն
Գրիգորի Լուսաւորչին մերոյ [ի թուականու-
թեան մերում ՌՄՂԵ, և ի դեկտեմբերի
ամսեան վերջում]: Ակզրի 5—96 էջերում
Սաղմոսարանը:

ՈՐԴ ՄՈՈՒ ԴՐԱ Ա Խ

ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՐ ԱՍՏՈՒԹԵԱՆՑԻՐ ԵՒ ՎԵՇԱԳՐՈՒ ԿԵ-
ՐՈՒՆԿԱՆՈՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՆ ՏԱՐԱ ՀԵՐԵՄ

Մ Ե Կ Ե Ա Պ Ե Խ Տ

1846 = Ա Մ Հ Ե

Մ Ե Հ Մ Տ Ա Խ Տ Ի Ն

Սաղմու Դաթի. Ս. Էջմիածին. 1846 թ.

Ժամակարգութիւն Հայաստանեաց սուրբ
Ակեղեցւոյ, յորում պարունակին երեք գիրք:
...Ի Ս. Էջմիածին, 1862—ՌՅԵ: Ակզրի 1—
92 էջերում Սաղմոսարանը:

Ժամակարգութիւն....: Վաղարշապատ, ի
տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածին,
1891—ՌՅԵ: Ակզրի 1—123 էջերում՝ Սաղ-
մոսարանը:

Էջմիածին տպարանից լոյս են տեսել նաև
Ակեղուարանի ամրողական և մասնակի մի
շարք հրատարակություններ: Ամրողական
հրատարակություններ են՝

1. Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի: Տպագրեալ հրամանաւ Սիմոնի
սրբոյ Էջմիածին: 1866—ՌՅԵ: Ի Ս. Էջ-
միածին:

Բաղկացած է 896 էջերից, 25.1×16.7 սմ շարվածքով: Ունի Եվլերիոս Կետարացու առ Կարպիանու թուղթու ու կանոնները և լուսանցային կանոնները⁴: Ունի նաև Գեորգ Սկլուսցու կարգավորած օրինակին հատուկ հախադրությունները ու «Վասն»-երի ցուցակները՝ համաձայնության կանոններով հանդերձ (որոնք հայտնի են Չորրապահն և Բագրատունու հրատարակություններով), բայց որոշ խմբագրման են ենթարկված:

Հաջորդ հրատարակությունները չունեն եվլերան և լուսանցային կանոնները: Ունեն հախադրություններ, որոնք արդեն բառացի նույն են Չորրապահն և Բագրատունու հրատարակությունների հետ, բայց «Վասն»-երի ցուցակներն առանց համաձայնության կանոնների են և թեթևորեն խմբագրված:

2. Ակտարան Տեառն մերոյ Յիսոսի Քրիստոսի: Տպագրեալ հրամանաւ Սինօսի սրբոյ Էջմիածնի: Ի Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի: 1884—ՈՅՑԻ:

Բաղկացած է $2+332$ էջերից, 18.2×10.8 սմ շարվածքով: Էջերի առորին լուսանցքներում նշանակված են վկայություններ՝ Աւտովորությամբ Աստվածաշնչի ամսաերդաման 1666 թ. և Վեճետիկյան 1733 թ. հրատարակությունների կողքի լուսանցքներում եղած նշումների: Վերջում «Յոցակ աւետարանաց Համբաւեան, Տաճարի, Խողարքից, Բժշկութեան և Անդաստանի, որ պաշտին ի կարգադրութեան հասարակաց աղօթից ըստ ճայնին» (էջ 329—332):

3. Ակտարան Տեառն մերոյ Յիսոսի Քրիստոսի: Ի հայուածեսութեան տեառն տեառն Մակարայ Ա. Վեհափառ և սրբ Դանոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց Հաղարշապատ, ի տպարանի և կաթողիկէ Էջմիածնի, 1890—ՈՅՑԹ:

Բաղկացած է 268 էջերից, 25.3×15.2 սմ շարվածքով: Որոշ օրինակներ վերջում ունեն համելվածներ՝ «Յոցակ աւետարանաց Համբաւեան...» (էջ 265—269) և «Յոցակ սկսուածոց շորից աւետարանչաց ըստ Տօնացուցի Հայաստանեաց եկեղեցու» (էջ 270—278):

4. Ակտարան Տեառն մերոյ Յիսոսի Քրիստոսի: Ի Վաղարշապատ, ի տպարանի և կաթողիկէ Էջմիածնի, 1891—ՈՅՑԽ:

Բաղկացած է $7+589$ էջերից, 9.7×5.4 սմ շարվածքով:

5. Ակտարան Տեառն մերոյ Յիսոսի

⁴ Հմտ. 4. Ա. Ամասրան, «Հայ համարարտապահին գրականությունը և Բայ մատնագրության համարարտ», Էջմիածնի, Մայր Աթոռի տպարան, 1972, էջ 8—15:

⁵ Հմտ. անդ, էջ 20—22:

Քրիստոսի: Երկրորդ տպագրութիւն: Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռու Ս. Էջմիածնի, 1905—ՈՅՑԴ:

Բաղկացած է 479 էջերից, 10.7×6.8 սմ շարվածքով:

Ի տարբերություն նախորդների՝ վերջին երկու տպագրությունները փոքրադիր են և համարվում են մեկը մյուսի 1-ին և 2-րդ հրատարակությունները, թեև բնագրային առումով ունեն տարբերություններ:

Ավետարանի այս հիմնագր տպագրությունները բնագրային առումով միասնություն չեն ներկայացնում: Նրանցից ոչ մեկը իր հայորդների անփոփոխ վերատառապությունը չէ: Մի քանի օրինակով կարելի է գաղափար կազմել այն մասին, թե ընթերցումների ընտրությունն ինչպես է կատարվել Աստվածաշնչի մեջ Զոհիրապահն և մերը Ուկանյան հրատարակություններից: Ցոյց տպալ Զոհիրապահն և Ուկանյան բնագրերի տարբերությունները, փակագծերում տարեթիւրով ցոյմ ենք Էջմիածնի այն հրատարակությունները, որոնք որդեգրել են տվյալ ընթերցումը:

Յովհ. Բ. 24.—

Զոհիր. Ոչ հաւատայր զանձն նոցա (1866, 1890):

Ոսկ. Ոչ հաւատայր յանձն նոցա (1884, 1891, 1905):

Յովհ. Զ. 22.—

Զոհիր. Բայց միայն ի միոյն (1884, 1890, 1891, 1905):

Ոսկ. Բայց ի միոյն (1866):

Յովհ. Զ. 36.—

Զոհիր. Եթէ տեսակը զիս (1884, 1890, 1891, 1905):

Ոսկ. Թէ տեսամետք զիս (1866):

Յովհ. Զ. 40.—

Զոհիր. Որ տեսամեջ զորդի և հաւատայր ի նա (1884, 1890, 1891, 1905):

Ոսկ. Որ տեսամեջ զորդի և հաւատայր ի նա (1866):

Յովհ. Ժէ. 7-8.—

Զոհիր. Արդ գիտացին եթէ զամենայն ինչ զոր եսոր ինձ, եսոր նոցա. և նորա ընկալան (1866, 1890):

Ոսկ.—Արդ գիտացին եթէ զամենայն ինչ՝ զոր եսոր ինձ, առ ի թէն են: Զի քանին զոր եսոր ինձ՝ եսոր նոցա. և նորա ընկալան (1884, 1891, 1905):

Այս երկությունների ցոյմը կարող է օգտակարություն ունենալ բնագրային հարցերի պատմությամբ զբաղվողների համար: Այս

Հապատակով Եցինք, որ կան նաև աղյուսութեաբ Բամադրութեամբ ցուց տվող դեպքեր Առողջեւ՝

3nif. b. 4.—

Զորի. Յ. Ա.
Զոհք. Խշանելք՝ բժշկէք, ոչ ոնելով Օշան
Բիւանդութեան:

Ասկ. Իջաներ յարագանց բժշկիր, ոչ մ-
նելով զնշան հիւանդութեան:

Այս ընթերցումները ևս որդեգրված են մեկի կամ մյուսի կողմից, բայց 1866 թ. հրատարակությունը դրանք համարել է. «Ծանոթագիր յանազանն»: թշնամիկ բժիշկ, ոչ ունելով նշան հիանդոթեան»:

Այսպիսի մի օրինակ է նաև՝

Bnūf. L. 46.—

Զոհը. Եթէ զնշմարիսն ասեմ, ընդէ՞ր ոչ
հաւատայք իմձ:

Ասկ. Թէ՝ զճշմարտութիւն սաևս ձեզ՝ ընդէլու ոչ հաւատայք ինձ:

Եշիմածնի հրատարակություններից երեքը՝
այսուղի ընտրություն են կատարել, բայց
1884 և 1891 թթ. հրատարակությունները
համարել են երկու ընթերցումները. «Եթէ
զգշտարիտն ասեմ ձեզ՝ ընդէ՞ր ոչ հրատարա-
յին»:

Էշմիածնի հրատարակություններում երեսում են նաև Բագրատունու հրատարակության հետքերը, ինչպես և Ավետարանի ձեռագիր օրինակների օգտագործման նշանը:

Հշիմածնի տպարանից լոյս են տեսեր և Ավետարանի մասնակի հրատարակություններ.

1. Անտարանք Խղաքերից ըստ չորից
Անտարանչաց: Հրամանաւ Սինօդի սրբոյ
Էջմիածնի: Վաղարշապատ, ի տպարանի
սրբոյ Կաթողիկէ: Էջմիածնի, ՌՅԱ. 1888:

Տաղկացած է 8 էշերից, 32×23.5 սմ շար-
վածքով:
**2. Աւտարան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի:** (Խողաբերից, Հանգստեան,
Բժշկութեան, Տաճարի և Խաչեպութեան):
Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթո-
ռիկ Գօնիածնի. 1892:

Բաղկացած է 36 էջերից, 25.6×17.2 սմ
շատկանգություն:

3. Աւետարան Տեսոն Մերոյ Յիշուսի
Քրիստոսի: Խղաքերից, Հանգստեան, Բժըշ-
կութեան, Տաճարի, Խաչելորեան, Անդա-
տանաց, Քառամօրեայ Գալստեան, Ս.
Զատկի, Խաչվերացի Լայն և այլն: Վաղար-
շապատ, տպարան Մայր Արքոոյ սրբոյ Էջ-
միածնի, 1906:

Բաղկացած է 50 էջերից, 26.9×16.2 սմ
շարվածքով:

Վերջին տարիներու Էջմիածնի տսպարանից լուս տևալ նաև չորս Ավելատարանների և Գործք Սուպերենդի աշխարհաբար բարգմանությունը, որը կատարվել է գրաբար բնագիր վրաին.

УКБСУСУ,

ՏԵՇԱՆԻ ՄԵՐԱՅ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ

$\text{P}(\text{G}_n = \Omega) \geq 1 - \epsilon$

1-11-1, pulled for

Անտառան, ի ս. Եջմիածին, 1866 թ.

Նոր Կտակարան: Տորս Աւետարաններ և
Գործք Առաքելոց: Արևելահայ նոր թարգ-
մանութեան: Մատ Աթոռ և Էջմիածին, 1969:

Բաղլացած է 478 էշերից, 16.2×9.7 մ² տարվածքով: Հրատարակության նպաստական տեղեկանում ենք, որ «Քարգմանությունը կատարել են և էշմիածնի բուզով ճամփառ» դասախոսներ Արթոն Հայինիանը, Պարզե Շահրապետանը և Սամուել Անդոնիսեանը: Թարգմանութեան բնագրային ճշումները կատարել է տ. Տիրան արքեպիսկոպոսը: Ներույնանու նոր Կոտակարանի օտար լեզուով գիտական վերջին հրատարակությունների միան մուտք:

Սա՞ Հօմիածնի կաթողիկոսության կողմից
սուրբգրական հայերեն ընագորերի աշխար-
հարար թարգմանության առաջին փորձ ու
նմուշն է: Որքան գիտենք՝ այդ աշխատանքը
ներկայում շարունակվում է, նոյն թարգմա-
նիչների կողմից, Նոր Կոտակարանի թարգ-
մանությունն ամբողջացնելու ուղղությամբ:

Պետք է ասել, որ Էջմիածնի Մայր Աթոռը միշտ էլ հնատառու է եղել հրատարակելու Հին և Նոր Կոտակարանների հայերեն գրաբար թանգիրն ամրողությամբ։ Լիակատար Աստվածաշնչի հրատարակելու հարցը Էջմիածնում օրակարգի խնդիր էր եղել դեռևս Մալքար Ա. կաթողիկոսի (1885—1891 թթ.) օրու և այդ ծրագրի իրագործումը հաճանչված էր Մաղաքիա եպս. (հնատառայում արձաւու.) Օրմանան, որը 1887—88 թթ. Էջմիածնի Ենտարանում աստվածաբանության դասախոսի պաշտոն էր Վարում, սպան նրա անակնակալ մեկնումց հնտու այդ ծրագիրը մնացել էր չիրագործված, ինչպես պատմում է Օրմանան ինքը⁶:

Խոհիման Հայոցի կաթողիկոսության (1892—1907 թթ.) շրջանում Աստվածաշնչի հրատարակության կարևոր հարցը մնում էր օրակարգի վրա, որովհետև 1895 թ. Կ. Պոլոտի Աստվածաշնչի Ամերիկան Ընկերության հրատարակած գրաբար Աստվածաշնչը վստահելիություն և որևէ պաշտոնականություն չէր ներկայացնում Բայ Եկեղեցու համար, որքան էլ նրա առաջարանում խոպսում էր ներսն պատրիարք Վարժապետանի մետու ունեցած բանեցած բանակցությունների և կայացած համաձայնության մասին⁷։ Ուշագրավ էր, որ այդ հրատարա-

⁶ Մատ. արք. Օրմանան, «Ազգապատում», մասն Գ, Երրուստիմ, 1927, § 2945.

⁷ Անսուրացիր առաջարանը գրված էր Բայ ընթիրոցի համար, որը սպառող պիտի համեմատար ապս հրատարակության։ Բայց Ամերիկան Ընկերության ներքին տեղի կատակալության մասնակի և մասնական տեղու պիտի որ կարծու ամօխտանում է Բայոց պատրիարքի գոյությունը ու նրա մեր հոգ բանակցությունը Բայ Ամերիկան Տ. H. Darlow and H. F. Moule, *Historical catalogue of the printed editions of Holy Scripture in the library of the British and Foreign Bible Society*, vol. II, New York, Kraus Reprint Corporation, 1963, p. 91. Այսուհետ ասկում է, որ Ընկերության կողմից այդ գործի մեջ ներգրավված են եղել նրեց հայեր, որոնցից Ամերիկան Կոտառանության կատարել է Բայերեն թամագրի համեմատությունը կրտականի հետ, Հովհաննես Հովհարավիշենտյանը՝ Բունականի մետ, իսկ Մատարի Գարագաշանը պատասխանատու է եղել րուն իսկ Բայերեն թամագրի համար։

Կամակած չկա, որ հրատարակության առաջարանը խմբագրել էն միշտայ երեք նոդին՝ առաջ մղելով հաճարուցալ պատրիարք Ներսու Վարժապետության համակրիսի անունը։ Թունու ազգային շնչով և համեմատու ունու գրված այդ առաջարանը Բայ ընթիրոցու համարակալության վրա բողոքում էր այն տպավորությունը, թե, կարծես, հրատարակությունը վայերացված է Բայոց պատրիարքության կողմից, մինչետ-

կությունը բացահայտորեն բողոքական դրույմ էր կրտս ընթիրություն Աստվածաշնչի միայն բողոքական կանոնի գրքերը, որոնք բայց հայկական կանոնի անվանում են Ամախականուն գրքեր։ Երանից դուրս էին թողնված հայկական կանոնի երկրորդականոն կոչված բողոք գրքերը՝ նորի Ա. Յուղի, *Տավրիթ, Մակարայնցոց Ա—Գ* գրքերը, նմասութիւն Սողոմոնի, Խմատութիւն Յնտավորություն Սիրաքայ և Թուղթ Բարուքայ։ Այս խոշոր բացուղությունները սկզբունքուն կարեւոր հշանակություն ունեն Երանով, որ այդ մասերի կրծատումը հայերի համար տու կտևական-բարոյական ընույթի խնդիր չէր, այլ նաև գործնական որովհետու Հայ կելելեցին արարողությունների բազմաթիվ ընթերցվածներ ունեն երկրորդականուն գրքերից⁸։ Մյուս կողմից անհայտ էր մնում այն, թե ի՞նչ բնագիր էր հրատարակվածը. այդ մասին Ակատելիորեն լուրջուն էր պահած հրատարակության առաջարանուն և միայն անորոշ կերպով ասկում էր, թե «Հայագոյն համարեցաք չերթալ զինու միոյ միայնոյ օրինակի», այլ որ ինչ մերձաւորագոյնն է

հրատարակածի բնագիրը Ներսու պատրիարքի ժամանակ դեռ գոյություն չէր ունեցել։ Ներսու Վարժապետությունը, ինչպես ինքը է տեղի կացնում, այդ գործի համանական մասնակություններն սկսել էր 1888 թ., պահպես որ այդ հրատարակությունը ոչ մի հակուրության և կամ վակերացման հետակա չէր եղել պատրիարքանը կողմից։

Օրմանանը, ամսամտերմական հարաբերությունների մեջ եղած լինելով Ներսու Վարժապետության հետ, իր «Ազգապատում»-ում ընդարձակ գլուխներ է նվիրել Երան՛ ամենայն մահրամատությամբ մարտարակությունը առաջարական կանոնի և գործունեության բանու կարող է պահպես համարվել պահապահական բանակցություններ և նամակներուն ոչ մի քանչ գրել։ Այս հանգամանքը, միանալով այս հարցուն Ընկերության տեղի կատակալություններուն համեմ նկող յուրիշան մետ, կարող է պահպես համարվել այն բանի, որ հավանաբար պաշտոնական բանակցություններ չեն եղել, այլ գուցն պարզապես Մորեի փոխանակության համար մեկ-երկու համեմատմանը (եթե երբեք եղել են), որոնք հնտագոյն, հրատարակության առաջարանում, խոշորացնելով ևս Ներսու պատրիարքի հայ-լուսավորչական հասարակությանը՝ որոշակի հպատակով։ Այս պարագաները կարելի է ճշտել և. Պոլսի Պատրիարքարանի դիմանում նուած հյութերով կամ արձանագրություններով, թեն կամ այդպիսիներ։

⁸ Հմմտ. Հովհ. թի. Մկրտչան, «Ա. Գրոյ ընթիրությունները Բայ կելելեցոյ մշշ», Լոյ (Չարաբար), Ա. Պոլսի, 1905:

Վասուածաղինը որ քատարակութեան առաջնութէ բժիշկ
և մի քութի գլուխերի տարրեր բնաֆերցուածներն իրեն և ան-
տպուած ու զարկուում են զանազան աւոգուր բանիւնց անձնուց
կարծիք իմանալու նպատակով ինքում ենք կամ թէ երբեք
դիտողութիւններով մերապարձու Ա Եթուի տպարան և
կամ յարանել այդ զիտոզութիւնները հրապարակու:

Հոմեմատութեան համար գործածուուծ ձեւադիրներն են
Ա. > 155. Յափաննես արքայի զրոր . 1272 թ. Ե. > 156
Արեփաննոս Դ. այներերիցանց Դ. էորդ Ակեռացու աշակերտ
նորա օրինակից ազգակից Օ. օքրապեանի բան օրինակին .
1292 թ. Ե. > 157. Նիմում թագուարի բան օրինակ
Խականի . 1295 թ. Ե. > 158. Հազոյն օրինակ թէ երի-
կարկատած բանը հանն ձեւ (ից) . 1255 թ. Ե. > 911
Վիրիթար Շ. յրիգանեցու ամրող տուուածաշունչը պարա-
նակող հարթակիր . Ե. 1280 թ. Ե. > 184. Եղիթամարում
զրուած . 1422 թ. Ե. > 185. միայն նպամատեան .
1447 թ. Ե. > 186. 1318 թ. Թ. > 180. 1373 թ.
Ճ. > 163 (թէ երի) . նախ քան 1465 թ. Ճ. Ճ. > 159
ազգակից և յատ նման Օ. օքրապեան բան օրինակին Գ. էորդ
Ակեռացու օրինակից նորա աշակերտ Վարտիրոսի արտա-
զրուած . 1303 թ. Ճ. Ճ. = > 157. Դ. էորդ . ց. Հին կա . բ. Եռ-
լոնիպուտմ . Ա. որ կա . բ. Կորիմում զրուած . մերջր 1368 թ.
Ճ. Գ. > 161. 1390-4000 թ. Ճ. Ե. = > 359. Դ. էորդ . ց.
Ե. 1330 (Ը) թ. Ճ. Ճ. > 182. բառ երեսիմ Յափաննես
Երգնկացու ինքնազիր . 1318 թ. Ճ. Ճ. > 153 սիսալմունք
Հազոյն համարուած . քայլ ոչ մաղ քան 13 (Ը) թ. > Ճ մի
մազազաթէ Երկաթազիր ճաշոց անշուշտ ոչ ոչ քան Ճ. Ճ.
զարում զրուած : Ճ ուրիշ Ճ. Ճ. Ճ. զարերի ճաշոցներ
ՊԼոր է ինկատի ունենալ որ ձանօթութիւնների և տար-
րերութիւնների համար ուրիշ նոր տառ զործ կածուի:

80

Եր բնագիրին՝ զայն ընտրեցար ի հայերէն
օրինակս անդ որ ցարդ ի լոյս ընծայեալ են»,
առանց, իհարկէն, ասելու, թէ համայստն ո-
րո՞նք էնս եղել օգտագործված այդ տպա-
գրությունները:

Բնական է, որ այս հանգամանքները չեն կարող վրիտել ժամանակակից հայ բարձր հոգևորականության ոշադրություններ և, իրոք, Խրիմյան կաթողիկոսն ու Օթմանյան եպիսկոպոսն իրենց որոշակի վերաբերմունքն են ունեցել այդ հասցում: Վերջին՝ Օթմանյանը, որ այդ ժամանակի արևմտահայ եկեղեցականության ամենագործուն Ենթայացուցիչներից էր, առ ոչինչ համարելով 1895 թվականի այդ հրատարակությունը, հետագայում իր «Ազգապատում»-ի Գ հաստրում նույն շրջանի դեպքերը Ակարագքելիս ասում էր, թե «ցարդ մեր եկեղեցին զորկ կը մնայ իր իշխանութեամբ և հսկողութեամբ հրատարակուած Աստուածաշունչ մատեան ունենալէ, որ մեծ պակաս մըն է ստուգիս»¹⁰: Սա մի սպառիչ գնահատական էր, որևէ այլև տեղ չեր թողնում խորհրդածությունների:

Նոյն կարծիքը ուներ նաև Խոհման Հայ-
րիկը: Նա նոյն շրջանում իսկ, եթե Ամերիկ-
յան Ընկերությունն այդ հրատարակության
պատրաստման փորձերը էր կատարում և,
իբրև նախափորձ, 1892 թ. լույս էր ընծայել
Հնգամատոյանը, իր զարակալման առաջին
տարիներից մտածում էր, որ հիշյալ թերի և
բնագրային առումով կասկածելի հրատարա-
կությունն ամենահեռ ընդունելի չէր, ուստի և
նետամուտ էր Եջմիածնի տպարանի արթես-
տագիտական մակարդակն անհրաժեշտ աս-
տիճանի բարձրացնելու և Հայ եկեղեցու գոր-
ծածության համար Աստվածաշնչի պաշտո-
նական հրատարակություն նայուելու:

Խրիմյան Հայոցին 19 Թունվ. 1896 թ. № 85
կոնդակով Օշանակիտ է հիես Բոգուց բաղ-
կացած տպարանական ժողով՝ Արթստակեն
և պահանջանական առաջարկությամբ, պար-
տավորեցնելով այնպես բարեկարգել տպա-
րանը, որ «Բնար լինիցի մեջ ի Բարիքաւոր
ձեռագրաց Աստուածաշնչն գրեանց Մատե-
նադրամին տպագրել զԱստուածաշնչն գիրս,
որու ճակատ մակագրեալ լինի՝ Ի
տպարանի Ս. Էջմիածնի ընդ Բովանդաւ
Մայր Աթոռու»:

⁹ Ամերիկան Ըստերությունը բագրեր ասելով Բաւկանուն էր Կրդականը (Հին Կոտակարանի Բանար) և Բունականը (Սոն Կոտակարանի Բանար).

¹⁰ Մադ. արք. Օրմանյան, «Ազգապատում», մաս 9, է. 2845.

¹¹ Հման, Արտակ Խոպ, Մժբատրաց, «Ս. Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը», Եշմիածնի (ամս.), 1972, № 11, էջ 48:

Նոյն թվականի 26 հունիս, № 181 կոնդակով Խրիմյան Հայրիկը փոխում էր տպարանական ժղովի կազմը՝ նախազան Եշանակելով Նահանգական վրդ. Նահանգականին և կրկնում № 85 կոնդակով տրված պատվերը՝ Աստվածաշունչ մատյանի տպագրության վերաբերյալ¹²:

Այս երկու դեպքերում էլ տպարանական ժղովի անդամ էր Եշանակիված Նդիա վրդ-Հասան-Զալայլանը: Այլուստ հնարյանի է, որ Եշիմածնի Մատենադարանում գտնվող ձեռագիր Աստվածածնների բնագրային համեմատության աշխատանքները երան էին հանձնարարված¹⁵:

Այդ աշխատանքներին զուգընթաց՝ Խրիմյան Հայրիկը որոշել էր արտասահմանից թերեւ տալ տպագրական նոր մեքենաներ և այլ պարագաներ, և այդ ծրագիրը հաջողությամբ իրացրուել էր 1896 թվականի ընթացքում Գյուտ ք. Աղանյանի գործողամամբ դեպի Եվրոպա. այդ գործառնությունների հետ կապված գործություններուն միշտ շեշտվում է Աստվածաշնչի հրատարակման անհրաժեշտությունը¹:

Այնու հանդերձ՝ Խրիմյան Հայրիկի ճի-
գերն 90-ական թվականներին արդյունք ըս-
կարողացան տալ Աստվածաշնչի տպագրո-
ւմն ուղղությամբ: Միայն 1900 թ. Ակադեմի-
ութիւն է, որ Էջմիածնի տպարանի տեսուչ Ա-
շուտ Վարդապետի պաշտոնական հայուսար-
ությամբ հաղորդվում էր, որ «Մայր Աթոռն
Ս. Էջմիածնի Վեհափառ Հայրապետի հա-
յանձենութեամբ սկսում է աստուածապար-
գել Ս. Մատեամի տպագրութիւնը:... Արդէն
պատրաստութիւններ են տեսնուում Շերկայ
1900 թուականին սկսելու տպագրութիւնը:
Տպագրուել և բաժանուել են թեմական և հո-
գենոր ատեաններին և երանց ստորադրեալ
գործակալներին անդորրագորեն՝ բաժանոր-
դագրութեան համար Ս. Աթոռի տպարանի
Կերպվ դրօշմած, ժապահնած և տպարանի
նեսչի ստորագրութեամբ վաերացած»¹⁰:
Բայց և այնպես 1902 թ. առաջին կիսամյա-
կում հազիկ է հնարավոր լինում դիմել գործ-
ական քայլերի: Խրիմյան Հայրիկը Էջմիա-
ծնի Ենմարանի տեսուչ Կարապետ Վլոդ Տեր-
Մկրտչյանին ազատելով պաշտոնից՝ նրան
պատվիրում է լծիկ Աստվածաշնչի ընա-
կան բնագրի աշխատանքներին, այսինքն՝
ամփոփելով մինչև այդ կատարված ձեռա-

¹² UGn, b> 48:

¹³ Արարատ (ամ.), 1896, էջ 312, ծան.: Ան., 1910. էջ 784:

¹⁴ Հմտն. Արտակ Խով. Սերամյանց, «Ս. Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործություններ», Էջմիածն, 1972, № 11, էջ 50—52:

¹⁵ Уриориан, 1800, кн 11—12:

գրական համեմատության աշխատանքները և որոշելով՝ Մատենադարանում գտնվող ընտրեագոյն օրինակները, բնագիր պատրաստել տպագրության համար, ճնշարանի տունմասվարտ և ուսանող սաների գործակցությամբ¹⁶: Նոյն թվականի աշխանը, երբ Աստվածաշնչի տպագրության սկիզբը դրված էր, Կարապետ վարդապետ մի հատուկ հոդվածով նորից էր հանդու գալիս պարզելու գիտական այն սկզբունքները, որոնց հիման վրա կատարվում էր Աստվածաշնչի հրատարակության պատրաստում¹⁷: Հայ որում ձեռագրերի ընտրության աշխատանքների արդյունքն ենել էր այն, որ Հին Կտակարանի համար կանգ էին առել սկզբում 10 և ապա միայն 8 հիմնական օրինակների լրա, առ այժմ մի կողմ թողմնելով մնացածները: Այս մասին նա գրում էր:

«Ենք կարող հարկա պնդել, թէ այդ 8 ձեռագիրները համեմատելով բոլոր մնացածների պարունակած տարրերութիւններն ամփոփած ենք լինում. բայց անում ենք հնարատոր և կատահ ենք, որ դորսը քիչ քան կմնայ: Մամաւանդ մենք չենք բաւականում այդ ձեռագիրներով և, որ միջոց ունինք կողմնակի աղրիրներից օգտուելո՞ օգտուում ենք: Սրբակ՝ չունենալով ո՞չ մի երկաթագիր, նախ քան ժամ ժամ դժ. դարու միջոցները գրուած աստուածաշնչն, մենք ունինք մի ընտիր երկաթագիր անթրական ճաշոց, որ ժԱ—ԺԲ դարերի գործ պէտք է լինի և բաւականաչափ մեծ ու փոքր հասուածներ է պարունակում Հին Կտակարանից (Ծննդոց և Ելից գրքերի սկզբի մի քամի գոյսները կը): Այդ ճաշոցը շատ ընթերցուածներ ընդունու և մեր գործածած մի քամի ձեռագիրներ գնահատելու մեծապէս նպաստեց: Համեմատեցնեք նաև որիշ ԺԳ—ԺԴ դարերի ճաշոցներ. սակայն դրա շատ անդի պակաս արժէք ունին: Բոլորովին աչքից չենք թողնում հարկա նաև միս մի կողմ դրած ձեռագիրները, այլ հարկատոր դէպքում նոցա օգնութեան ենք դիմում՝ մի աչքի ընկնդող ընթերցուած պարզելու համար, և աշխատում ենք նոր ի նորոյ ստուգել, թէ մէկը կամ միսը չունի¹⁸ արդեօք այնպիսի արժամիքներ, որ սկզբում մեր ուշադրութիւնից փախած լիներ: Այ և Ս. Գորի այնպիսի մասեր կան, որոնք գտնուում են թերի և կողմնակի ձեռագիրներում. արդակու, Եսայի մարգարելութեան համար ունինք մի երկաթագիր օրինակ. Առա և միս մարգարելութիւնների, Ա-

ուակաց գործի, Սաղմուների և՛, համար բազմաթիւ որիշ օրինակներ, որոնցից անշոշն օգտու կրատենք ժամանակին: Իսկ երբ սահմատաներին հասնենք՝ մեր ընտրած ձեռագիրներն այլևս երկրորդական տեղ կրոնեն, և հարկ կինի համեմատել առելի երկաթագիր, Ժ—ԺԲ դարերում գրի առենուած օրինակներ, որոնցից բաւական թուով գտնուում են ո՞չ միայն Մ. Աթոռի Մատենադարանում, այլ և մեր երկրի զանազան կողմերում, երբեմն ամենախուզ ամենաներում (ինչպէս օր. Մեծշն, Թալիշ, Բանանց կը) ցրուած: Նոր Կոտակարանի վերաբերմանը խնդիրն առհասարակ առելի պարզ է և սկզբանական օրինակը վերականգնելու առելի դիրին, որովհետև այստեղ թարգմանութիւնն եղել է ուղղակի լուսարկեցից, որի մետք համեմատելով կարելի է մեծ մասամբ հաստատ որոշել, թէ զանազան ընթերցուածներից ո՞րն է ուղղոր. Մինչդեռ Հին Կոտակարանի մէջ ամեն բայլափոխում հարց պէտք է տայ՝ արդեօք բուն թարգմանչներին են արդպէս գրել կամ սրբագրել, թէ յատոյ եկողներ սկզբանական ընթերցուածը, որ որիշ թարգմանութիւն է եղել, համաձայնեցրել են ծօթանամից թարգմանութեան»¹⁹:

Այնուհետև Կոտակարան վարդապետը երկարորեն վերյուծական նկարագրությունն է տախի այն ձեռագրերի, որոնք ընտրված են այս նախառակի համար²⁰:

Ծրագրված հրատարակության փորձանական պրակը, տարը Յթերցումների ցուցակի հետ միասին, արդեն պատրաստ էր 1903 թ. սկզբներին և քննարկման համար ուղարկված էր մի շարք մասնագետների ու մտավորականների, որոնցից՝ հայտնի բանասէր Հ. Կարապետ Տեր-Մահմակյանը²¹ և գորարագետ Հակոբ Գորգենը²² օգտակար դիտողություններով ու թելադրանքներով հանդս էին նկել մամուլում:

Երկար որոնումներով մնաց հաջողվեց այդ փորձանական նմուշից մի օրինակ հայտնարերել Երևանի Պետ. Մատենադարանի դիվանական քահանում Գարեգին արքեակ. Հովհանիսի գործերում²³: Սա այն օրինակն է, որ Հովհ. ա. քմ. Մկրտչանը 1903 թ. փառության և Պոլսից Էջմիածին է վերադարձել՝ իր դիտողություններով: Փաստաթուղթը բաղկացած է երեք մասերից.

1. ԱԾԽՈՐԱԳԻՐ աղ՝ 1 թերթի վրա (1 էջ),

¹⁶ Ան, էջ 1080—1081:

¹⁷ Ան, էջ 1081—1086:

²⁰ Բազմավագ, 1903, էջ 343—349:

²¹ Քիւամենին, 1903, մարտի 18, № 1963:

²² Երևանի Պետ. Մատենադարան, Գարեգին արքակը. Հովհանիսի դիվան, բրապահան 88, վակրագիր 4:

¹⁶ Տես՝ Կոտակարան վարդապետի Բաղմուրագրությունը, Արարատ, 1902, 474—477:

¹⁷ Տես՝ «Աստուածաշնչի նոր հրատարակութիւնը», Արարատ, 1902, էջ 1069—1088:

ՄՆԱԼԻՆԻՔ (Ա. և Արարածք)

ԳԼՈՒԽ Ա.

2. Ճ. սգի. տպ. ջուրց.	5. ԶԵՖԻ. վաղորդեան.	ի (չո
ԴՓ. վաղորդեայն.	7. տպ. օ. էր. ԱԳ. ի վերայ.	ԱԳԴ
տպ. օ. եւ ետես Աստուած զի բարի է.	9. ՃԱԼ. օ. որ.	ԳԵ.
10. Ճ. ջրոցն.	12. տպ. բանջար. տպ. որ է ի վե-	տպ.
րայ ամենայն երկրի.	ր. որ սերմնն.	20.
Ճ. մեծամեծան.	15. Զ. ի վերայ	մինչ
երկրի.	երկրի.	երեւ
20. տպ. ջուրց (Զ. ջուրգդ).	17. Է. ծագել ի յերկրի.	22.
21. ըստ հաստատութեանն (Ճ. ըստ հաստատութեանէ).	21. ԶՃ. զկէտս. տպ. ջուրց (ՃԵԼ. ջուրցն).	ընդ
22. տպ. ըստ հաստատութեանն.	22. Ա. ի ծովսո.	երկու
ի ծովսո.	Ճ. բարի է.	որ ու
24. Է. եւ սովուն եւ գազան.	25. Ճ. սովուն.	որպէ
29. եւ ամենայն փայտ.	30. ՃԱԲԳ. եւ ամենայն.	է. Չւ

ԳԼ. Բ

4. տպ. զերկինս	5. տպ. լետ (ՃԱԲ. լիեալ).	որ ու
ԱԳԲ. աղբիւր.	ԱՃ. առօգանէր.	կուս)
Գ. բարժանի.	8. տպ. օ. ՏԵՐ.	օ. զն
14. ԸՃ. զէմ յանդիման.	16. ԵԶՃ.	8. Ա.
որ իցեն.	17. Ճ. բարւոյն եւ չարին.	սուրբ
ԶՃՃ. այժմ. Ճ. իմմէ է.	ԲԴՓԱ. իմոյ.	որպէ
Ճ. այսորիկ.	ԶՃ. երկորին.	է. Չւ
ԱԳԱՃ. կինն.	25. տպ. կին	ներու

ԳԼ. Գ

1. Գ. որք իցեն.	2. որ ի նմանէն.	3. որ ի նմանէն.	4. 9	5. 3.
Ճ. ի նմանէն.	Ե. լիսիլիք.	4. 9		(ՃՃԿ.)
Ջիք.	6. տպ. օ. եւ. (ԳՃ. եւ. ի			
7. երկոցունցն (ՃՃ. երկոցու-				
գնալոց.	ԳՓԱ. կին.	11. ՃԱ.		
12. ԵԺ. ի ծառոյն.	14. ՃՃ Ե.			
ԲԴՓԱ. գնայցես.	16. Ճ. տրտմունք			
ցիս.	17. ԵԶԺ. ի ծառոյն.	ՃԱԲԳ.		
Ճ. եւ հող.	21. ՃԴԵԶ. օ. ՏԵՐ.			
աէն.	24. տպ. քերորէից.	ԱԲԴ. քերուրէւ. Ա		
բէից).	Ճ. շրջանակաւ.	Ճ. շուրջանակի.	Գ. սկարչել.	բերք.
տպ. դճանառարչո.	(ՃԵ. զճանառարչու).			կաւին
				բինն

ողղված «քանիմաց ամձանց», ուղարկվող տպագրական նմուշի մասին իրենց դիտողություններն անձու խնդրանքով։ Ազդի մյուս երեսը դատարկ է։

2. Փորձնական պրակը՝ 1 տպագրական մամու կամ 8 թերթ (16 էջ), որի պարունակությունն է ԾԱՇԽԵՐԸ գիրքը։ Ա զինից մինչև ի՞ո գլուխ 9-րդ տունը։

3. Տարբերցումների ցուցակը՝ 1 թերթ (2 էջ)։

Հնդիանոր գումարով 10 թերթերից բաղկացած այս փաստաթուղթը, որի կարևոր մասերից հրատարակում ենք երեք լուսապահանքեր, ունի 22.2×15.3 մմ չարփածք։

Ազդում Բամառուակի նկարագրված են տպագրության համար օգտագործվող Բիմ-նական ձեռագրերը, որոնց թիվը 16 է։ Այդ տվյալներն այժմ էլ կարևոր են գաղափար կազմելու համար, ուն որո՞նք էին պատրաստվող գիտական հրատարակության աղբյուրները։ Պատի և ավելորդ չենք համարում դրանք ներկայացնել այստեղ՝ լուսաբանչուր ձեռագրի նախկին համարի կողքին ավելացնելով նաև այժմյան համարը, որ նրանք կրում են Երևանի Պետ. Մատենադարանու։

Ա. «Հին» № 155 (այժմյան՝ № 345). Աստվածաշունչ Հովհաննես Սրբայեղոր, 1270 թ., գրիչ՝ Բարսեղ։

Բ. «Հին» № 156 (այժմյան՝ № 179). Աստվածաշունչ, 1292 թ., գրիչ՝ Մտեխանոս Գոյմերիցանց, Գեղրգ Սկսուցու աշակերտը։

Գ. «Հին» № 157 (այժմյան՝ № 180). Աստվածաշունչ Հերում Բ թագավորի, 1295 թ., գրիչ՝ Մտեխանոս։

Դ. «Հին» № 154 (այժմյան՝ № 178). Աստվածաշունչ, 1253—1255 թթ., գրիչ՝ Միքայել քթ։

Ե. «Հին» № 944 (այժմյան՝ № 1500). Միհիթար Այրիվանեցու հայունի ճառընտիրը, որը պարունակում է և Աստվածաշունչը, ԺԳ դ. 70-ական և 80-ական թթ.։

Զ. «Հին» № 184 (այժմյան՝ № 207). Աստվածաշունչ, 1421—1422 թթ., գրիչ՝ Հովհաննես վրդ. և ուրիշներ։

Է. «Հին» № 187 (այժմյան՝ № 141). Միհայն Հնգամատյան, ԺԳ դ., գրիչ՝ Միհիթար երեց։

Ը. «Հին» № 181 (այժմյան՝ № 953). Աստվածաշունչ, 1317 թ., գրիչ՝ Կիրակոս քարոզի և ուրիշներ։

Թ. «Հին» № 180 (այժմյան՝ № 352). Աստվածաշունչ, 1367—1371 թթ., գրիչ՝ Գրիգոր Թորոսանց։

Ժ. «Հին» № 163 (այժմյան՝ № 185). Աստվածաշունչ (թերթ), ԺԳ դ., գրիչ՝ Պողոս։

ԺՄ. «Հին» № 159 (այժմյան՝ № 182).

Աստվածաշունչ, 1803—1804 թթ., գրիչ՝ Մարտիրոս վրդ., Գեղրգ Սկսուցու աշակերտը։

ԺԲ. Գեղրգյան № 357 (այժմյան՝ № 2705). Աստվածաշունչ, 1368 և 1660 թթ., մասամբ գրված Բողոնիացում և մասամբ Ղրիմում. գրիշներ՝ Առաքել, Ստեփանոս քթ. և Նիկողոս։

ԺԳ. «Հին» № 161 (այժմյան՝ № 346). Աստվածաշունչ, 1390—1400 թթ., գրիշներ՝ Պետրոս արդ., Հովհաննես քթ. և Մելքիսեդէ։

ԺԴ. Գեղրգյան № 859 (այժմյան՝ № 2627). Աստվածաշունչ, 1888(?) թ., գրիշներ՝ Հակոբ, Սարգիս քթ.։

ԺԵ. «Հին» № 182 (այժմյան՝ № 206). Աստվածաշունչ, 1318(?) թ., գրիշներ՝ Մտեխանոս, Կիրիկ և Հովհաննես Երգնելացի։

ԺԶ. «Հին» № 153 (այժմյան՝ № 177). Աստվածաշունչ, ԺԳ դ., գրիշներ՝ Մովսես և Ներսես(?) եղբայրներ։

Այս Բիմնական օրինակների²³ մեջ օգտագործվում էին նաև մի քանի ձեռագիր ճաշցոներ՝ ԺԲ.—ԺԴ. ԺԳ. Այս նշանը կ'նրկի թէ Բեագիր կը Աշամակէ. բայց ո՞ր բնագիրն է, երբայլակա՞ն թէ յունական։ Աստվածաշունչի մեր թարգմանութիւնը լուսարէն եղած է. զայն պէտք է նշեն»։—«ՔՅ. Այս նշանը կ'նրկի թէ Բեագիր կը Աշամակէ. բայց ո՞ր բնագիրն է, երբայլակա՞ն թէ յունական։ Աստվածաշունչի մեր թարգմանութիւնը լուսարէն եղած է. զայն պէտք է նշեն»։—«ՔՅ. Նոյն դիտողութիւն։ Եռանի՝ թէ լուսարէմի մետ բաղդատութեան դրուեր մեր թարգմանութիւնը, որովհետև ինչ ինչ տեղեր տարրեր թարգմանուած են»։—«Մինչև ի գալ ի Սեպովը պիտի լինի, ի՞նչ է այս անձանաց բարը Չոռու» (ՄԱՅ. ԺԳ. 10 տան մասին է)։

10-րդ թերթի երկրորդ երեսում, որ վերջանում են տարընթերցումները, Մկրյան քահանան իր կարծիքներն են ամփոփում։

«Տպագրական դիտողութիւնը ի թերթին՝ որ ճարտար արթեատագիտի խորհրդակցութեամբ նշանակեցի, կարևոր են յոյժ, և Բարկ է զանց չառնել տպագրութիւնն վայելու և անթերի առնելոյ համար։

Իսկ ի մասին բաղդատական ծանօթութեանց՝ այսինքն ընդ ձեռագրաց համեմատութիւններն, եղէ Բարկ անհրաժեշտ համար։

²³ Այս ձևոագրերից մեծ մասի նկարագրությունն ու բնութագիրը մանրամանորեն տվել էր արդեն Կարապետ վրդ. Տեր-Մկրյանցան, Արարատ, 1902, էջ 1081—1086։

ուած է տպագրել ա'թքան մանրամասնաբար, այն ատեն լաւ կը լինի դնել զանոնք իրաքանչիր գրոց վերջը, այսինքն՝ Ծննդոց գրքի վերջը, Ելից վերջը և այն, կարգաբաց ինձ կը թոփ թէ՝ այս պիտի ստուարացնել գրքի ամբողջութիւնը:

Այսորիկ միայն լինելով իմ դիտողութիւնըն» և այլն:

Թուականն է՝ «ի 25 փետրուարի 1903. ԺԹ. Խենքանի ՌՏԾԲ»:

Ինչպէս պարզվում է՝ այս դիտողութիւններից՝ Հովհն, քի. Մկրտչանն անհրաժեշտ էր համարում ունենալ ձեռագրերի համեմատությամբ կատարված մի ճշգրիտ բնագիր՝ ոչ թե գիտական օգտագործման համար, այլ կրոնական առօրյա գործածության համար, այսինքն՝ ժողովրդական հրատարակություն, որի համար անհրաժեշտ չէր տարրներցումների նշումը:

Ի դեպ՝ այդ ժամանակաշրջանի մամուլում տարրեր կարծիքներ էին հայտնվում այս հարցում: Ոմանք գտնում էին, որ առ այժմ բավական է լույս ընծայել Աստվածաշնչի միայն մի ժողովրդական հրատարակություն՝ պապացին թողնելով գիտական հրատարակությունը. և նոյնիսկ ոմանք գտնում էին, որ առաջին հերթին պետք է հրատարակել աշխարհաբար խարգմանություններ՝ արևմտյան և արևելյան լեզուներով: Ուրիշներ գտնում էին, որ պետք է միաժամանակ լույս ընծայել ժողովրդական և գիտական հրատարակություններ: Կային և ուրիշներ՝ հարցին բանափրական առումով մոտեցողներ, որոնք էջմիածնից ակնելու սպասում էին միակ և խիստ գիտական մի հրատարակություն:

Դժբախտաբար վերոհիշյալ պրակի լույս տեսնելուց հետո Աստվածաշնչի հրատարակման աշխատանքներն անսպասելի կերպով դադարեցին, հայունի չէ, թէ ի՞նչ պատճառներով. և այսօր ուղիղ 70 տարի է, որ լույթուն է տիրում այդ մասին: Նոյնիսկ հայունի չէ, թէ ո՞ր են գտնվում կատարված աշխատանքների անտիա հյորթերը²⁴:

Այս բոլորը, սակայն, պատկանում է անցրային, էջմիածնի Մայր Աթոռի նախաձեռնությամբ սուրբքական հրատարակությունների և հատկապես լրիվ կազմով Աստվածաշնչ մատյան հրատարակելու ձեռնարկությունների պատմությանը: Իսկ մեր օրերում:

Մեր օրերում Մայր Աթոռի այժմյան գահակալ՝ Ն. Ս. Օ. Վազգեն Ա. Հայրապետն է

²⁴ Ապարդյուն մնացին Երևանի Պետ. Մատևադարանի դիվանական բաժնում մեր կատարած որոշումները: Գոյց այդ նյութերը լինեն Կաթողիկոսական դիվանում, որն այժմ գտնվում է ՀՍԿ Պատա-

պամանձնել իր վաղեմի նախորդմեր Հակոբ Չուղայեցու, Մակար Ա.-ի և Խրիմյան Հայրիկի փայտիայած ծրագրերի իրականացման պատվարեր նախաձեռնությունը: Վերջին տարիներս Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ստեղծվել է ձեռներաս անհատներից կազմված մի հանձնաժողով, որն ուսումնակիրություն է Աստվածաշնչի հայերեն դասական թարգմանության բնական բնագրի պատրաստման և հրատարակման հնարավորությունները: Այս որախափթթ իրողությունը մեծ հույսերով լցնում է հայկական Աստվածաշնչի բնական ոգիտական արժեքն ու հշանակությունը գնահատող ամեն մի հայի սիրութ: Երոք որ այսինի մի հրատարակություն ներկա ժամանակներում անհրաժեշտ է ոչ միայն Հայ եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու և ամրագնելու տեսակետից, այլև հայագիտությունը խթանելու հրա հարածուն զարգացման ողոյ վրա համաշխարհային բանափիրության ապարեզում:

Թե՛ մեկ և թե՛ մյուս տեսակետից դիտելով այդ անհրաժեշտությունը, կարելի է համոզված լինել, որ աշխատանքը կկատարվի մեկ ու միակ ուղիղով և կիմանապատասխանի ժամանակակից գիտության պահանջներին: Այդ ուղին Է Աստվածաշնչի ձեռագրերի համեմատությունը և համեմատությունների հիմնավորական բնական համահավաք բնագրի կազմում՝ լեզվական և իմաստային բոլոր տարբերությունների նշմար: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ հենց այսպիսի բովանդակություն էլ ունեն Վեհափառ Հայրապետի տվյալ ցուցումները սույն կարեւոր գործի վերաբերմանը: Նկատի ունենալով, որ համազգային նշանակություն ունեցող այս ձեռնարկական կապակցությամբ կարող են իրենց օգտակար թեկադրանքներն առել բոլոր զբանք, որոնք իրենց մասնագիտության բերմամբ մոտիկ են այս գործին, մենք կցանկանայնք ասել մի բանի խոր:

Քննական բնագրից պիտի կազմվի հնագույն և ընտրելագույն օրինակների համեմատությամբ: Դա պիտի լինի ոչ թե եղածների մեջ լավագույն համարված մի օրինակի հիման վրա մյուսների ունեցած տարբերությունները ստորին լուսանցքներում նշելով, այլ համեմատության համար ընտրված ձեռագրերի տարբերակներից լավագույններն ընդգրկելով բուն բնագրի մեջ:

Համեմատությունների համար օգտագործվելիք ձեռագրերի ընտրությունը պիտի կատարվի հատուկ ուսումնասիրությամբ բնընվազ ձեռագրերի մի ավագի խոշոր զանգվածի միջից: Այսինի լայն ձևի ընտրությունն է միայն, որ հնարավորություն կլուած ձեռագրերում գոյսաթյուն ունեցող խմբավորումները

հայունաբերելու և ասելու, թե ձեռագրերից ո՞ր որին է խմբակից: Խմբավորումների ճշտումն անհրաժեշտ է որոշելու համար Սատվածաշնչի բնագրի հայերեն թարգմանության շերտերը, քանի որ հայկականը Եղարդում նախ թարգմանվել է ասորերենից (Քիմնական մասը) և հետո այդ թարգմանությունը հունական բնագրի հիման վրա վերանայվել է, իսկ հետագա դարերում ենթարկվել է ուրիշ ստուգումների²⁵: Առանց շերտերի հետազոտության՝ հնարավոր չի լինի հասել այն բնագրին, որ մեզ ժառագություն էին բողել ուկեղարի մեր թարգմանիները:

Արդեն հայտնի են ձեռագրական տարրերակները հանելու և երանց միջոցով գիտական համահավաք բնագրի կազմելու եղանակները: Հայտնի է նաև, որ նման դեպքերում օգտագործվում են նաև տպագրի օրինակներ, տակայն միայն այնպիսի տպագրություններ, որոնք ձեռագրական հշանակություն ունեն: Այս ստումով հայերեն Աստվածաշնչի գորոխյուն ունեցող բազմաթիվ տպագրությունների մեջ միակը Հ. Հովհ. Չորրապայմանի հրատարակությունն է, կատարված Վենետիկում 1805 թ., քանի որ հայրազատ և անալյազ Ենթակացուցիչն է ս. Ղազարի № 1 ձեռագրի, որը ընդորինակված է 1819 թ. Կիլիկիայում Գեղրգ Ակնացու կարգավորած օրինակից: Այս հրատարակության մեջ Չորրապայմանը տարընթերցումներ հշանակելու համար օգտագործել է ուրիշ 9 ձեռագրեր ևս, քայլ այդ ընթերցումները պահել է ստորին լուսանցքներում և երեք չի խառնել Տիմինական օրինակի բնագրին:

Այս մոտեցմամբ՝ Աստվածաշնչի մյուս տպագրություններն արժեքից զորկ են և իրավունք չունեն օգտագործվելու, որովհետև ոչ մի ձեռագրի ներկայացուցիչ չեն, այլ ներկայացնում են հրատարակիչների կողմից այս կամ այն շափով վերամշակված բնագրեր՝ այլևայլ ձեռագրերի և աղբյուրների օգնությամբ: Այսպես՝

Ամսեներամի 1686 թ. հրատարակությունը, որ կատարել է Ուկան վոդ. Երևանին, Ենթակացնում է մի բնագրի, որը մեծ շահերով սրբագրված է լատինական Կովկասական հիման վրա:

Կ. Պոլսի 1705 թ. հրատարակությունը, որ ներդրում է Լատինական պատմությամբ Օախորդից և արտապիտած:

Վենետիկի 1738 թ. հրատարակությունը, որ Միհիթար Սերաստացին էր. կատարել, նոյնական արտասովիած է Ուկան Երևանցու

²⁵ Հմմտ. Հ. Ս. Անապան, «Աստվածաշնչ մատյանի հայկական բնագրիը», Եջմանին, 1966, № 11—12, էջ 71 և շար.:

հրատարակությունից, թեև որոշ բարեկայտականներուն:

Պետերբուրգի 1817 թ. հրատարակությունը նոյնական արտասովություն է Միհիթար Սերաստացու հրատարակությունից:

Սիրամիկորի 1817 թ. հրատարակությունը նոյնական արտասովիած է Միհիթար Սերաստացու հրատարակությունից:

Վենետիկի 1860 թ. հրատարակությունը, որ կատարել է Հ. Արմեն Բագրատունին, նոյնական հարազատ ոչ մի օրինակ չի ներկայացնում: Նու իր սահագարակությունը ուստագայում է հրատարակելու, ասում է, որ Չորրապայմանի օգտագործած 10 ձեռագրից օրինակների ընթերցումներն իրար է հասնել: «Նորոգ ընթերցաք նախ զուարդերութիւնս տասնեցունց գրչագիր օրինակաց մերոց, և ապա ի բարձումն ամենայն տարսկութանց՝ բաղդատեցաք զողջոյն թարգմանութիւն մեր ընդ յոյն բնագրին: Եւ որանոր զուար միարան ընդ միմեաւն՝ կամ զամենայն օրինակս մեր, և կամ զարգուստ ի նոցամէ, և միանգամայն համաձայն ընդ յունականին, զայնուիկ երար ընթացս անդ առաջիկայ տպագրութեան»²⁶: Մշակողական այս աշխատանքի մանրամասնությունները ցուց տալու համար տարընթերցումներ չի հշանակել, այնպես որ արդյունքը համեյսանում է գիտական հիմունքներով կատարված մի գրական մշակում, բայց ո՞չ հայկական բնագրի ստումով և այժմյան հմաստով գիտարենական հրատարակությունն:

Կ. Պոլսի 1895 թ. հրատարակության մասին Օախորդ Էջերում արդեն տեսանք, որ Արա պատրաստողները ոչ մի ձեռագրի և կամ տպագրված ոչ մի բնագրի հետ զործ չեն ունեցել, այլ Օախորդ տպագրություններից ըստ հարմարության հավաքել են այն ընթերցումների, որոնք պատշաճում էին բնագրին (ինձ՝ երրայրական և կամ հունական բնագրին): Այս տպագրության մի նախափորձը, որը միայն Հնգամատյանն էր բովանդակում, լույս էր տեսել 1892 թ.:

Վիեննայի 1929 թ. հրատարակությունը, որ կատարել է Օորից Ամերիկյան Ընկերությունը, նոյնական արտասովություն է նախորդից, այնպես որ նոր ոչինչ չի տալիս:

Ուրեմն, բացի Չորրապայման հրատարակությունից, հայերեն Աստվածաշնչի մյուս հրատարակություններից ոչ մեկը ձեռագրական հշանակություն չունի, ուստի և չի կարող տեղ ունենալ տարընթերցումների բաժնում:

Կազմվող բնագրի ստորին լուսանցքներում կտեղապուրվեն տարընթերցումները. իսկ՝ ծառոթագրությունների բաժնում՝ որը

²⁶ Բազմավեպ, 1966, էջ 350—351:

տեղավորված կլիմի հասորի վերջում, կը-
տրի լուսաբանումը ընթերցումների ընտ-
րության ընթացքում ծագած բնագրարանա-
կան հարցերի կամ պատճառարանումն
ընտրված ընթերցումների: Այդ բաժնում կը-
հյուրընկալվեն նաև տպագիր Աստվածա-
շնչերում հրատարակիչների կողմից արված
այն դիտողությունները կամ սրբագրության
փորձերը, որոնք կարող են այս կամ այն
կերպ ուշադրության արժանի համարվել. օ-
րինակ՝ այնպիսիներ, ինչպիսին է Մխիթար
Սերատացը արած դիտողությունը՝ Դ թագ.
Զ. 23 «Եւ արկ աշաջի նոցա խոտու տակաւ
մեծաւ» նախարարական վերաբերյալ, ըստ
որում այստեղ գտնվող խոտու տակաւ մեծաւ
աղավաղ բառերի փոխարեն նա իր հասորի
վերշարանում ուղղում է առաջարկել սեղա-
նը խորտկաւ մեծաւ ձևով՝ 1845 թ. Փարի-
զում հրատարակված յոթնեղույթան Աստվա-
ծաշնչի ներք բաղդատության հիման վրա²⁷: Ծանոթագրությունների համար նամաօրի-
նակ բազմաթիվ դեպքեր կհուշեն նաև, ա-
սենք, երրայական և հունական բնագրերի
համաստությունից եկած այն տարրերու-
թյունները, որոնք հշանակված են Ամերիկ-
յան Ընկերության կողմից 1895 թ. հրատա-
րակած Աստվածաշնչի ստորին լուսանցր-
երում. բայց այստեղ պետք է անպայման
հկանի ունենալ, որ տվյալ հրատարակու-
թյունը չի նենալած ո՞չ երրայական և ո՞չ էլ
հունական բնագրերի բնական հրատարա-
կությունների վրա:

Ի դեպ՝ թե՛ Հին և թե՛ Նոր Կոտակարան-
ների համար մեր օրերում կան հունարեն
բնագրի գերազանցորեն գիտական հրատա-
րակություններ, որոնք անհրաժեշտ շափով
պիտի հաջի առնվեն ծանոթագրություննե-
րի սահմաններում, որովհետև Ե դարի մեր
թարգմանությունը հունարենից է գալիս:
Բայց վերապահորեն պետք է մոտենալ եր-
րայական բնագրի հարցին: Առեսարակ
պետք չէ շատ տարվել երրայականով, ինչ-
պես տարվել էին Ամերիկյան Ընկերության
հրատարակությունը պատրաստող հայերը,
որոնք իրենց գրած առաջարանում ասում
էին. «Կարևոր համարիմք յիշել, գլու հա-
րուսացի, ինչ մի զոր զարմանօք դիտեցաք
ի հետազոտութեան աստ մերում, այն և՝ զի
թեւետու թարգմանութիւն մեր զետես երթայ
քազում հատառեան և նշդի զթարգմանու-
թեանն Եօթանասնից, որ ուրեք խոտորեալ
ի հիման մերձնանայ երրայական բնագրին: Ապարէն կարևոր խնդիր է թէ ուստի՝ իցէ
խոտորումն այս հայերէնին ի թարգմանու-
թեան անոնի Եօթանասնից: Ակն ոնդիմք եթէ

նոր նոր հետազոտութիւնը տացեն լոյս այս
կարևոր խնդրոյք:

Նրանք կարծում էին, որ հայկական
թարգմանության բնագրում տեղ-տեղ կան
երրայական բնագրի ողղակի հնարքը: Բաց
այդ հետևողությունը մակերեսային էր: Եթե
հայկական բնագրում կան երրայական բնա-
գրի հնարքը, դա շատ հասկանալի երևույթ
է և բացատրելի՝ ոչ թե երրայական բնագրի
ողղակի շփմամբ, այլ մեր թարգմանության
բնագրի պատճառական զարգացման երկու
համագումանքներով:

1. Աստվածաշնչի հայերեն առաջին
թարգմանությունը Ե դ. Ակզեներին ասորա-
կան Պեշտուտոյից է կատարվել և որքան էլ,
Եվեսոսի տիեզերական ժողովից (431 թ.)
հետո, այդ թարգմանության բնագիրը վերա-
նայիլ ու սրբագրվել էր Բունական բնագրի
հիման վրա, այնու ամենայնիլ ըրա մեջ շատ
բան էր մնացել ասորականի հնարքերից, և
նոյնինի այդ հնարքերն անցել էին վրացերենն
Աստվածաշնչին, որի հնագույն թարգմանու-
թյունը հայերէնից էր կատարվել²⁸: Դոկ ա-
սորական Պեշտուտոյի Հին Կոտակարանը եր-
րայերենից էր թարգմանվել²⁹: Մեր Հին
Կոտակարանի այժման բնագրում գտնվող
այն ընթերցումները, որոնք մոտիկ են եր-
րայականին, մասսամբ կարող են ծագած լի-
նելի այս հանապարհով:

2. Հայունի է, որ Աստվածաշնչի հայերենն
երկրորդ թարգմանությունը հունարեն կե-
սարյան կոչված բնագրից էր կատարվել Ե
դարում, Եվեսոսի ժողովից հետո, բայց ժա-
մանակի ընթացքում որոշ ուղղումների է
ենթարկվել հետևողությամբ հունարեն որիշ
բնագրերի, որոնց թվում և Որոգինեն Սոյեր-
սանդրացու կազմած Չորեքլի կամ Քա-
ռափշան կոչված օրինակի. հունարեն այս
խմբագրությունում ամփոփված էին Բ դա-
րում Հին Կոտակարանի երրայական բնա-
գրից կատարված հունարեն երեք անկախ
թարգմանություններ (Ակրուար, Սիմառ-
սի և Թեռոդոսինի) և Յոթամասնից այն
բնագիրը, որը Որոգինենի կողմից վերանայ-
ված էր այդ թարգմանությունների հիման
վրա: Արդ՝ ոչ միայն բնանափական և հիշա-
տակարանային տվյալներն են ասում, որ
Քափշյանի հիման վրա ուղղումների է են-
թարկվել հայկական բնագիրը, այլև Հին
Կոտակարանի հայերեն բազմաթիվ ձեռագրե-
րում առկա են Որոգինենի կազմած բնա-
գրին հատուկ պարմանական հշանեները և
լուսանցրերում շատ տեղ հշված են Ալյո-

²⁸ Հմտու. Հ. Ա. Անապան, «Աստվածաշնչ մաս-
տական բնագիրը», էջ 91:

²⁹ R. Duval, „La littérature syriaque“, 3e éd.,
Paris, 1907, p. 26. I. Ortiz de Urbina, „Patrologia
syriaca“, Romae, 1958, p. 210.

դասի, Սիմաքոսի և Թեոդրոտիոնի անոնները²⁰: Հետևում է՝ Հին Կոսմարականի այժմյան բնագրում գտնվող այն ընթերցումները, որոնք մոտիկ են երայսկանին, մած հասամք կարող են եկած լինել Քաղիշյանից:

Եթե ամերիկյան հրատարակության առաջարակի հետինակները հաշվի առած լինեն այս հանգամանքները, ամենին չեն զարմանա, որ հայկական այժմյան բնագրի որոշ ընթերցումներ մոտենում են երրայսկանին:

Այս հանգամանքներում մեր բննական հրատարակության համար երրայսկան բնագրի համեմատության անհրաժեշտությունն, ըստ մեզ, չի երևում: Իսկ եթե որոշ շափով դրա կարիքն զգացվի, այդ դեպքում պիտի դիմվի ոչ թե վերոհիշյալ՝ ամերիկյան ոչ-գիտական հրատարակությանը, այլ երրայսկան բնագրի իսկապես բննական հրատարակություններին, որոնցով այնքան հարուստ է բանասիրական աշխարհը:

Մեր կողմից այս մի քանի խոսքը բավական է առ այժմ Աստվածաշնչի հայկական բնագրի նոր հրատարակության պատրաստման ծրագրի կապակցությամբ: Մեր կար-

²⁰ Հմմտ. Հ. Ս. Անապան, «Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը», էջ 79—82:

ծիքն այն է, որ պեսք է աշխատենք ունենալ այս հրատարակությունը ոչ թե որպես Աստվածաշնչի հայերեն մի ճշգրիտ թարգմանություն, որի սանեն գնում համապատասխանի երրայսկան և հունական բնագրերին, այլ հայերեն այն թարգմանությունը, որը մեր ուկեղարյան թարգմանիչների խմբի ձևուելուն էր:

Համոզված ենք, որ Վեհափոս Վազգեն Ա. Հայրապետի հեղինակավոր հեկավարությանք գործող հանձնաժողովը կիարողանա արժանապես հրապարակ թերեկ մեր դասական թարգմանության բնագիրը լիարժեք կիարարանքով, այն կիարարանքով, որով առ ապահովվել է մեզ մեր նախնիների կողմից: Նրան է սպասում հայ ժողովուրդը Հայուններում և ի սիյուս աշխարհի: Նրան է սպասում նաև համաշխարհական գիտական հասարակայնությունը, որն արդեն փաղոց է տվել իր գնահատականը Եղարի Սահմակ-Մեսրոպյան թարգմանիչների մորի կողույան աշխատանքը հանդիսացող թարգմանությանը՝ նրան տալով «Թագուհի թարգմանութեաց» անոնը:

Եվ այդ հրատարակությունը կիհնի Մայր Աթոռի տպարանի գործունեության փառքի ու պակը՝ սորբորական հրատարակությունների գործում:

